Ուղեցույց

Ինչպե՞ս ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն

Հունվար, 2020թ.

Սույն ուղեցույցը ֆինանսավորվել է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակներում: Այս կայքում/ուղեցույցում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան հետ պարտադիր չէ

1. Ո՞վ է օրենքի ուժով համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացի

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի են նաև օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

2. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման հիմքերը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1) քաղաքացիության ճանաչմամբ.

2) ծննդով.

3) քաղաքացիություն ստանալու միջոցով.

4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով.

5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով.

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

7) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

3. Ովքե՞ր են ճանաչվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են ճանաչվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում.

2) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայերը կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը դիմում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար.

3) Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող ազգությամբ հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն:

Սույն կետի հիմքով անձը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե օրենքով սահմանված կարգով դիմել և ստացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ: Այս դեպքում անձը ճանաչվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

4.Ինչպե՞ս է որոշում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխայի քաղաքացիությունը

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

5.Ինչպե՞ս է որոշում երեխայի քաղաքացիությունը, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուս ծնողի քաղաքացիությունն անհայտ է, կամ նա քաղաքացիություն չունեցող անձ է

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

6.Ինչպե՞ս է որոշում երեխայի քաղաքացիությունը, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում կամ,

2) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ

3) եթե բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը:

7.Վերը նշվածներից բացի կա՞ն արդյոք դեպքեր, երբ երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն

Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե՝

1) ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են.

2) ծնողների քաղաքացիությունն անհայտ է.

3) ծնողներն այլ երկրի (երկրների) քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն.

4) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացի, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային.

5) ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսի քաղաքացիությունն անհայտ է.

6) ծնողներից մեկի քաղաքացիությունն անհայտ է, իսկ մյուսն այլ երկրի քաղաքացի է, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային:

8.Նախորդ կետում նշված դեպքերում ի՞նչպես է երեխան ձեռք բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն

Երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

9.Ի՞նչ ընթացակարգով է ազգությամբ հայ երեխան ձեռք բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, երբ ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն

Ազգությամբ հայ երեխան, որի ծնողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն, Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու (բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետության հասցեով հաշվառվելու) պահից ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Այս դեպքերում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա, որին կցվում է նաև ծնողների գրավոր համաձայնությունը:

10. Ի՞նչ է իրենից ենթադրում քաղաքացիությունը վերականգնելը՝ որպես քաղաքացիության ձեռքբերման հիմք

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցրած անձի քաղաքացիությունն, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնվել, եթե բացակայում են «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի յոթերորդ մասով սահմանված հիմքերը (քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին), և եթե նրա քաղաքացիությունը չի դադարեցվել նույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով (քաղաքացիությունը դադարեցվում է կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե անձի կողմից կեղծ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով, և արարքը կատարելու պահից չի անցել 5 տարի):

Այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած, սակայն այլ երկրի քաղաքացիություն չստացած անձը, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը:

11. Ո՞ր դեպքերում է իրականացվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումն իրականացվում է ներգաղթի և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

12. Ո՞վ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և

3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

13. Իրավունքն ունի՞ արդյոք անձը դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես չի բնակվել Հայաստանի Հանրապետությունում և չի կարող բացատրվել հայերեն լեզվով

Այդ պահանջների բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1) որը մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա.

2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար.

3) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

4) որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:

14. Կարո՞ղ է արդյոք անձը ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես չի բնակվել Հայաստանի Հանրապետությունում, չի կարող բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը

Առանց այդ պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ անձը կամ անգործունակ անձը, որի խնամակալը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

15. Կա՞ն արդյոք օրենքով նախատեսված բացառիկ այլ դեպքեր, երբ անձը կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն

Առանց օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է շնորհվել Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց:

16. Քաղաքացիություն ձեռք բերելիս արդյո՞ք ազգությամբ հայերն ունեն արտոնություններ

Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված *պարզեցված* կարգով:

17. Ո՞ր պետական մարմին է անհրաժեշտ դիմել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն (հասցե՝ քաղաք Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք, թեժ գծի հեռախոսահամար՝ +374 10 37 02 64):

18. Ո՞ր մարմին կարող է դիմել անձը, եթե գտնվում է Հայաստանի Հանրապետության պետական տարածքից դուրս

Այս դեպքում անձը կարող է դիմել օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ:

19. Ո՞վ կարող է դիմել պարզեցված կարգով Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, և ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել

Պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար կարող է դիմել՝

1.այն անձը, որը մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա, կամ

2. որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար:

Այս դեպքում դիմողն անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում՝ ուղղված ՀՀ Նախագահին
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար

- ամուսնության վկայականը և դրա պատճենը, ամուսնու անձնագիրը և դրա պատճենը կամ տեղեկանք ամուսնու քաղաքացիության մասին
- իր երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը և դրա պատճենը, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և դրա պատճենը
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

Պարզեցված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար կարող է դիմել նաև այն անձը, որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում և որը 18 տարին լրանալուց հետո 3 տարվա ընթացքում դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար:

Այս կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար կարող է դիմել այն անձը, որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

Այս դեպքերում դիմողն անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում՝ ուղղված ՀՀ Նախագահին
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար
- ծննդյան վկայականը և դրա պատճենը
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

20. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն ազգությամբ հայերը պարզեցված կարգով Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար

Ազգությամբ հայերն անձամբ պետք է ներկայացնեն.

- դիմում՝ ուղղված ՀՀ Նախագահին
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստան Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/

- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար
- ծննդյան վկայականը և դրա պատճենը
- ազգությունը հաստատող փաստաթուղթը՝ ծնողի (պապի կամ տատի կամ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթ
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

21. Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել ազգությամբ հայ լինելը հաստատելու և այդ հիմքով քաղաքացիություն ստանալու համար

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ազգությամբ հայ լինելը հաստատող հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

ա. ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ (ՀՀ Կառավարությունը 2007թ. նոյեմբերի 23-ի N 1390-Ն որոշում) նշված եկեղեցական կառույցների կողմից տրված մկրտության մասին փաստաթուղթ՝ հաստատված այդ որոշմամբ նախատեսված կարգով, մկրտվածի կամ նրա ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով,

բ. օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված և ապոստիլով հաստատված կամ հյուպատոսական վավերացմամբ՝ ազգությամբ հայ լինելու մասին փաստաթուղթ,

գ. ազգությամբ հայ լինելու հանգամանքը հիմնավորող այլ փաստաթուղթ՝ հաստատված ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված կարգով,

դ. ծնողի (պապի, տատի, հարազատ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որում առկա է ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում: Համահայր կամ համամայր եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթն անձի համար կարող է հանդիսանալ ազգությունը հաստատող փաստաթուղթ, եթե եղբոր կամ քրոջ ազգությամբ հայ լինելը պայմանավորված է նրանց համատեղ ծնողի ազգությամբ (այս փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է նաև տվյալ անձի ազգակցական կապը հիմնավորող՝ իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթուղթ):

Ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթեր են համարվում նաև անձնագիրը, ծննդյան վկայականը, քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, ճամփորդական փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետությունում

կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, եթե դրանք պարունակում են ազգությամբ հայ լինելու վերաբերյալ նշում:

22. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն անձինք, որոնց Հանրապետության քաղաքացիություն պետք է շնորհվի Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած լինելու համար

Այս դեպքում անհրաժեշտ է ներկայացնել.

- դիմում՝ ուղղված ՀՀ Նախագահին
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

23. Ինչքա՞ն պետական տուրք է գանձվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար

ՀՀ քաղաքացիություն ստանալու համար նախատեսված է 1,000 ՀՀ դրամ պետական տուրք (օտարերկրա պետությունում դիմելու դեպքում՝ 2 ԱՄՆ դոլար, 2 Եվրո, 200 ՌԴ ռուբլի):

24. Ի՞նչ ընթացակարգով են անցնում Հայաստանի Հանրաետության քաղաքացիություն ստանալու համար պետական իրավասու մարմին ներկայացված դիմումները

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը կազմում է եզրակացություններ, որոք ուղարկվում են Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով:

25. Ի՞նչ է իրենից ներկայացնում Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը

Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության եզրակացությունների քննարկումն է, դրանց վերաբերյալ ամփոփ եզրակացություններ կազմելը և դրանք Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելը:

26. Ի՞նչ կազմ ունի Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը

Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի ղեկավարից, անդամներից և քարտուղարից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ:

27. Ի՞նչ ընթացակարգ է նախատեսված Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումների քննության համար

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովում ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվում են հանձնաժողովի ղեկավարին և անդամներին՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները հանձնաժողովում քննարկվում են դրանք ստացվելուց հետո առավելագույնը երկամսյա ժամկետում:

Նիստի ընթացքում հանձնաժողովը քննարկում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները: Քննարկումների ընթացքում հանձնաժողովը կարող է դիմել պետական կառավարման համակարգի մարմիններին անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու նպատակով:

28. Ի՞նչ փաստաթուղթ է կազմվում Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար ներկայացված դիմումի քննարկման արդյունքում

Քննարկումների արդյունքում կազմվում են ամփոփ եզրակացություններ, որոնք հանձնաժողովի ղեկավարի և անդամների կողմից ստորագրվելուց հետո համապատասխան արձանագրության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության եզրակացությունների հետ միասին մեկամսյա ժամկետում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին:

29. Ի՞նչ իրավասություն ունի Հայաստանի Հանրապետության վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացություններն ստանալուց հետո

Հայաստանի Հանրապետության վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից եզրակացություններն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնում է քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ քաղաքացիության շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է անձին քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովից եզրակացություն ստանալու:

30. Ու՞մ կողմից և ի՞նչ վերջնական ակտով է անձին շնորհվում Հայաստանի Հանրաետության քաղաքացիություն

Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ հարցերը օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հանրապետության նախագահը՝ հրամանագիր ընդունելու միջոցով:

31. Ի՞նչպես կարող է Հայաստանի Հանրաետության քաղաքացիություն ստանալու համար դիմում ներկայացրած անձը հետևել դիմումի ընթացքին

Դիմումի ընթացքին անձը կարող է հետևել էլեկտրոնային եղանակով՝ այցելելով ՀՀ ոստիկանության «police.am» պաշտոնական կայքէջ:

32. Ի՞նչ ժամկետ է նախատեսված Հայաստանի Հանրաետության քաղաքացիություն ստանալու համար ներկայացված դիմումի քննարկման համար

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկվում են վեցամսյա ժամկետում:

33. Իրավունք ունի՞ արդոք անձը մերժման դեպքում կրկին դիմել Հայաստանի Հանրաետության քաղաքացիություն ստանալու համար

Այո, իրավունք ունի:

Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո:

34. Ի՞նչ արարողակարգ է նախատեսված Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալիս

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը տալիս է հետևյալ երդումը. «Ես՝ (անուն-ազգանուն), դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, երդվում եմ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Պարտավորվում եմ հարգել

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը և սովորույթները:»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը ստորագրում է երդման տեքստը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

35. Արդյո՞ք կարող է Հայաստանի Հանրապետության քաղաքացին զրկվել քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից

Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

36. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքները ենթակա՞ են արդյոք սահմանափակման

Նշված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

Օրինակ, օրենքով հստակ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե անձի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, կամ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ, կամ անձն ունի պետության հանդեպ չկատարված պարտավորություններ (օրինակ՝ չեն անցել զինվորական ծառայություն) և այլն: